

## ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՑԵՆԸՆԸՆՈՍՈՒԹԻՒՆ

Յովհաննես Թումանեան «Թաճառեղծութիւններ». Թիֆլիս, 1903 թ.,  
302 էրես, գինն է 3 ը.

Երգերի, լեզենդաների և պոէմաների մի ժողովածու է  
այս, որ պ. Թումանեան լոյս է ընծայել մի բաւական հաստ  
հատորի մէջ: Ընթերցողն այստեղ գտնում է երիտասարդ բա-  
նասատեղծի ոգևորութեան, տխուր թէ ուրախ ներշնչումների,  
խոների, յաճախ վշտի, երբեմն ցնծութեան արտայայտութիւն-  
ները մի շարք տարիների ընթացքում: Այսպիսով հասարակու-  
թեան, գրական քննադատութեան առաջ դրուած է մի գեղա-  
րուեատական ամբողջացրած գործ, որի այս կամ այն գնահա-  
տութիւնը, միշտ զգուշաւոր ու լրջմիտ, պիտի կարողանայ  
ներկայացնել բանաստեղծի տաղանդը, նրա հոգեկան ստեղծա-  
գործող կարողութիւնները իրանց խսկական չափով ու գոյնով:  
Ճշմարիտ բանաստեղծի հոգին կոչուած է լինել բարոյա-  
կան ողջակէղ գաղափարական սեղանի վրայ, ուր ինքն է զո-  
հողը և զոհը միաժամանակ: Նրա երգը թէս իր հոգու սեփա-  
կան գալարումները, նրա ցաւոտ մրմունջները կամ բուռն զե-  
զումն է, բայց նա պէտք է միենոյն ժամանակ կարողանայ իր  
ելևէջերի, իր թրթիռների կրել անթիւ ուրիշ հոգիներ, տան-  
ջուած՝ թէ ուրախ բայց, խօսելու, ուժգնապէս արտայայտուե-  
լու անկարող, համարեա համբ: Բանաստեղծը պիտի մեզ ասի  
այս, ինչ մենք մութ կերպով զգում ենք, բայց ասել չենք կա-  
րող: Մարդկային լեզուն անկատար, թերի միջնորդ է հոգեկան  
և արտաքին աշխարհի մէջ, ահա թէ ինչն մենք հաճուքով  
նայում ենք բանաստեղծի շրթունքներին, որի ասելու և  
«զգալու կարողութիւնները մեզանից գերազանց են: Թող նրա

երգը վարակի մեզ, խօսի մեր սրտին ուժդնապէս, մենք լաց կը լինենք, կամ կը խնդանք նրա հետ, հակառակ դէպքում՝ մենք անցնում ենք նրա սազից լուլթեամբ։

Տեսնենք այժմ, թէ ի՞նչ է ասում մեղ պ. Թումանեան և մինչև ո՞ր աստիճան վարակի են նրա հողու զեղումները։

**Սկսենք «Երգերից»։**

Բանաստեղծական տարրեր ժանրերի մէջ երգը, հակիրճ ոտանաւորը իր ուրոյն պայմաններն ու տեղն ունի։ Նա գեղագնցապէս անհատական է. բանաստեղծի հոգեկան յոյզերի, յանկարծական բռնկումների՝ մերթ ծիծաղկոտ, յաճախ վշտոտ և միշտ խորունկ արտայայտութիւնն է, երգը զգացմունքների աշխարհում այն փախչող գեղեցիկ վայրկանն է, որ բանաստեղծը, և միայն բանաստեղծը կարողանում է բռնել և արձանացնել ժամանակի ու տարածութեան մէջ։

Մեր գունատ իրականութեան մէջ, ուր հասարակական մոտիւնները յայտնի պայմանների շնորհիւ հնչում են անհատական յոյզերը, ուր միջավայրը Մոլոխ դարձած՝ լափում է այն ամենը, ինչ անմշիջապէս ընդհանրութեան համար չէ, դժուար է սպասել անհատական ցաւի խորունկ՝ երգ։ Իսքը՝ բանաստեղծը խորապէս զգում է այդ կացութիւնը և վհատ ու ընկնուած գանգատւում իր նախորդներին։

«Եւ մենք խորսակուած՝ մեր կեանքի ծէզից,

Անյոյս ու դալով, նակատներս ցած,

Ընկնում է քնար մեր մատաղ ծեռքից,

Ընկնում են սրտից եւ՝ երգ, եւ՝ Աստուած։»

Հոգեկան այսպիսի վիճակը, երբ քնարն է ձեռքից ընկնում, անհատական բռուն երգերի համար չէ։ Եւ պ. Թումանեան, ինչպէս շատերը հայ բանաստեղծներից, այդ մասում թոյլէ, նա կարծես վախվելով, անհամարձակ է երգում իր սեփական սէրն ու վիշտը։ Ահա.

«Մի որոնիր՝ մի ժամանակ

Արհամարհածդ՝ այս կրծքի տակ.

Հառաջանքով դուքս թռաւ նա,

Ու դատարկ է տեղը հիմա»...

**Կամ այս.**

«Ուրախ գիշեր, տրտում գիշեր

Վիշտոս ու ես ենք արթոն մենակ

Եւ ուզում ենք մի լաւ յիշել,

Թէ ո՞րտեղից իրար գտանք»։

Այստեղ կայ մի փոքրիկ վիշտ, անորոշ ու տարտամ, որ հազիւ թէ կարողանայ աչք թացացնել։ Մութ, մոայլ գիշերին

սովորական հոգին անդամ, որ ստեղծագործող կարողութիւնից զուրկ է, երբեմն համակւում է մի փոքրիկ, անհասկանալի թախիծով. Այսքանը չափազանց քիչ է, որպէսզի կարողանայ մի վարակիչ, յուղիչ զգացմունք դառնալ ընթերցողի համար:

Ահա նրա վերջին երգը՝ «Պանդուխտ եմ քոյրիկ», գրուած 1902 թւին, Բանաստեղծը պանդուխտ է աշխարհուա, մենակ է իր վլտի հետ: Բայց այդ վիշտը դարձեալ տարտամ է, նա ոչ մի Ալֆրէդ-դը Միւսէի «Դիշերների» լացն է, և ոչ մի Դուրեանի ըմբոսա բողոքը ճակատագրի դէմ: Տողերը տխուր են, գըրողը տխուր է, բայց վարակիչ չէ: Մեր կարծիքով այս ոտանաւորը նոյնիսկ անհարթ է գրած, համեմատութիւններն ու պատկերներն էլ գեղեցիկ չեն.

«Բայց զնում եմ ես՝ հալածւած նորից,

Ամեն վայելքից ու բախտից հեռու,

Նոյնիսկ հայրենի հողից ու ջրից

Խնչէս եղերու:»

Հետևեալ տունը բնաւ գեղեցիկ չէ. մարդ կարծում է, թէ որևէ առակ է կարդում և ոչ լիրիկական մի զեղումն.

«Ո՞վ դու միամիտ: Բայց, երկինք վկայ,

Չեմ եղել երբէք ես այդքան ստոր,

Որ կարենայի այս դաժան բանտում

Լինել բախտաւոր:»

Շատ աւելի յաջողուած կարելի է համարել «Ժմ երգը» որպէս անհատական յոյզի բուռն արտայայտութիւն: Բնութիւնից վերցրած պատկերն էլ աւելի ուժգնութիւն և փայլ է տալիս այդ երգին.

«Ես երգեցի սարի վրայ,

Ու չորացան խոտ ու վարդ,

Անապատ է այնտեղ հիմայ,

Սե՛ւ, ամայի անապատ:

Հառաջանքից այրուած սարում

Էլ ծաղկի չի դալարում:

Իբրև սիրային մոտիւ համարեա յաջողած կարելի է համարել «Ժմ սէրը».

Ես սիրել եմ վարդը տըժզոյն

Սիրուց տանջուած այտերի,

Մեղամաղձոտ խաղաղութիւն

Զոյգ սեւորակ աշերի:

Մնացած երգերի մէջ կան աւելի կամ պակաս յաջողուած կտորներ, բայց իբրև ամբողջութիւն թոյլ են: Պ. Թումանեան թէն անպայման տաղանդաւոր, բայց անհատական վշտի, սե-

փական հոգու ցաւերի այն երգիչներից չէ, որոնք հեկեկում են միայնութեան ու խաւարի մէջ ինչպէս լոռութեան ոգիներ և սասանեցնում են մեզ իրանց լացող թախիծով, Նա մի ըմբոստ չէ, որ իր տաղանդի բոլոր զօրութեամբ ու փայլով ծառանում է հասարակական ընթացիկ բարոյականութեան և անհատական կամքերը, տենչերը, յոյսերը, ամբողջ կեանքը փշրող անօգուտ կաշկանդումների դէմ: Մենք մատնանիշ արինք դրա պատճառներից խոշորի, միջավայրի վրայ, կ'աւելացնենք նաև, որ պ. Թումանեանին պակասում է փիլիսոփայական լայն զարգացումն և անշուշտ տեմպերամենտ:

\* \* \*

Նայրէիծայր կարդալով պ. Թումանեանի «Երգերը» դըժուար չէ նկատել որ բանաստեղծը դեռ չի գտել իր խակական մոտիւները, նրա հոգում քնած այլ հնչիւններ կան աւելի ուժգին, աւելի հարազատ ու գեղեցիկ: Իր «Երգերի» մէջ նա թափառում է ինչպէս մի ճամբորդ, որ մթին, կուսական անտառը մտնելու համար ստիպուած է անցնել թփերի միջով, կամ լեռնային վեհ բարձունքները թևակունելու համար բարձրանում ու իջնում է ցածրիկ բլուրներով: Հայրենի իրականութիւնն է, ուր նա կը մտնի վերջիվերջոյ բանաստեղծական մտորումներից յետոյ և այնտեղից կը բերի մեզ այնքան ծանօթ ու գրափշ պատկերներ:

Ահա այդ պատկերներից մէկը, միայն մէկ հատիկն է ընկել նրա «Երգերի» մէջ և արդէն ապացուցանուամ է, թէ ինչի՞ է ընդունակ բանաստեղծը, և որոնք են նրա հոգուն ընտանի, նրա ապրած, սիրած, փայփայած յոյշերը: Այդ մի հատիկ երգը նուիրուած է հայրենի իրականութեան այն հնադարեան խղճուկ գործիքին—գութանին, որի յետևից այնքան գեղջուկ սերունդներ բայցել են տնքալով ու երգելով, որի հետ կապուած է եղել մի ամբողջ ժողովրդի ճակատագիր, և որը հանդիսանում է որպէս խորհրդանշան միշտ աշխատող, բայց և միշտ դժբախտ մի ցեղի:

«Արի, գութան, վարի, գութան,

Օրն եկիլ է՝ ճաշ դառել,

Ալը շնոր տուր, խոփիդ դուրբան,

Օրննեալ Աստւած, հօրուէլ:

Քաշիր ճզր, ուսիդ մատաղ,

Քաշիր-քաշենք, վար անենք,

Ճիպտին արա, քըշիր, հոտաղ,

Մեր սեւ օրին նար անենք:  
 Պարտքատէրը գանգատ լնաց,  
 Քեօխւէն կրգայ, կրծեծի,  
 Տէրտէրն օրհնեց, անվարձ մնաց,  
 Կը բարկանայ, կ'անիծիա:

Սա արդէն անհատական վիշտը չէ, սեփական սրաի ցաւը չէ, այստեղ ժողովուրդն է տնքում, աշխատում, երգում ու դարձեալ տնքում, որովհետև ամէկը կը ծեծի, միւսը կ'անիծիա: Դարերն են խօսում այս մի քանի տողերի մէջ, անէծքի ու ծեծի տակ կրացած հնազանդ ճակատի կնճիռների պատկերն է այս, որի մուայլ պոէզիան բռնում ու խեղում է բոլոր նրանց, որոնք ծնուել են ու ապրել հայրենի իրականութեան մէջ, որոնք գիտեն՝ թէ ինչ ասել է գիւղում ծեծ ու անէծք: Եւ այդ երգը նոյնքան մեղմ է, որքան ինքը՝ միշտ անիծուած ու ծեծուած այդ ժողովուրդը, որ քայլում է, քայլում իր գութանի յետեց և միշտ էլ գժբախտ է: Պ. Թումանեան հայ բանաստեղծ է, հայ ժողովրդական բանաստեղծ այդ բառի լայն իմաստով: Առանց նրա կենսագրութեանը մօտիկից՝ ծանօթ լինելու՝ և միայն թերթելով նրա այս հատորը՝ կարելի է պնդել, որ նա ծնուած է գիւղում, լեռնոտ, անտառապատ մի երկրում, ուր ջրերը շառաչում են, ուր գիշերներն այնքան ահաւոր են, որ այնտեղ ապրող մութ մարդկանց երազներն ու խոները բոլորը խօլական են, բոլորը յիշեցնում են նախնական ժամանակները, երբ մարդը դողում էր բնութեան ոյժերի հանդէպ: Այս են վըկայում նրա գրքի մնացած երկու մասերը—լեզենդաները և պոէմաները: Թումանեան բանաստեղծին պէտք է վնադրել հէնց իրանց գիւղում,

«... որ հպարտ,  
 Լեռների մէջ միզապատ,  
 Խոր ձորերի քարափին՝  
 Ձեռքը տւած ճակատին՝  
 Միտք է անում տիրապէմ»:

Գիւղերը, մութ ու մոայլ գիւղերը միշտ ամիտք են անում տիրապէմ, բայց լուռ են: Պ. Թումանեակի շնորհիւ նրա հայրենի գիւղը լեզու է առնում ու խօսում: Եւ նա պատմում է հազարումի անօրինակ բաներ, ուրախ ու տիսուր, սիրուն ու ահաւոր, և բոլորն էլ ինքը՝ այն խաւար գիւղն է ստեղծել, նաև յերիւրել կամ ահից ու սարսափից, կամ բնութեան, խաւարի վրայ իր ձեռվ լուսոյ մի շող ձգելու տենչից, կամ ցաւից, կամ հոմերական ծիծաղի, անզուապ, սանձարձակ ծիծաղի պահանջից: Այստեղ կենդանիները լեզու են առնում ու խօսում, աշխարհի

իրերը բացատրում։ Խաւարը փսխում է, անտառը մոնչում, ձորերը տնքում են, քաջքերը հաջում. լուս ոչինչ չը կայ գիւղում, ամեն ինչ ձայն ու լեզու ունի, ամեն ինչ տիեզրական բանականութեան մի մասն է; Եւ պ. Թումանեան, որի մանկութիւնն այդ բոլոր սարսափների հետ է ձուլուած, վարպետորէն, գողտրիկ ձևով այժմ յետ է քաշում հին խաւարը ծածկող քողը, վերարտադրում է լացող կամ ծիծաղկոտ հայ գիւղը։

Ահա այն սիրուն լեզենդաները, որոնք հայ գիւղն է ըստեղծել, այն ահազին մորթէ փափախի տակ կախուած, կնճռոտ ճակատները. նրանք պատմում են, թէ շունն ու կատուն ինչին թշնամի։ Բանն այն է, որ

«Փամանակով կատուն ծոն էր,  
Շունն էլ զիխին գդակ չունէր.  
Միայն գիտեմ ոչ, որդիսնց որդի  
ճանկել էր մի զարան մորթի.  
Եկաւ մի օր, ձմոնամոլին,  
Կատուի կուշտը տարաւ մորթին։

Կատուն յանձն առաւ գտակ կարել, բայց կոտր ընկաւ ու փախաւ։ Եւ

«Են օրուանից մինչեւ օրս էլ  
Շունն էս բանը չի մոռացել.  
Մըտքում հայ դեռ պահում ա,  
Որտեղ կատուին պատահում ա,  
Վեր ա թշում, վրայ վազում,  
Իրեն մորթին ետ ա ուզում։

Եւ այս փոքրիկ լեզենդայի մէջ որքան պարզութիւն, ժողովրդական ոգու, հասարական յարաբերութիւնների, գիւղի հոգեբանութեան ինչ ճիշտ ըմբռնումն։ «Շունն ու կատուն մերժողովրդական զրականութեան մէջ մի գոհար է։ Նոյնքան յաջող չէ «Անխթամարը»։ աւելի լաւ են «Անրախտ վաճառականները» և «Անիծւած հարսը»։ Անյաջող է նոյնպէս «Լուսաւորչի կանթեղը»։ իսկ «Փարւանան» թէկ գեղեցիկ է, բայց անշուշտ էլ աւելի գեղեցիկ կարող էր մինել շնորհիւ յաջող նիւթին, որի մշակութիւնը թում է անկատար։

Լեզենդաների վրայ շատ չենք ծանրանում, որովհետև աւելի ասելիք ունինք պ. Թումանեանի պոէմաների մասին։ Այստեղ էլ նիւթը գիւղն է, նրա սէրը, նրա տօնական ցնծութիւնը, խինդն ու լացը, ծիծաղն ու հառաջանքը, կատաղի զայրոյթն ու կոյր հնազանդութիւնը, ճակատագիրը, ցաւը։ Եթէ պ. Թումանեան ուրիշ ոչինչ գրած վինէր բացի իր պոէմաները, նա դարձեալ իրաւունք կ'ունենար հայ աչքի ընկնող բա-

նաստեղների կողքին պատւաւոր տեղբանել։ Ճշմարիտ է, այդ պոէմաները շատ չեն, նրանք հատորներ չեն կազմում, բայց բանաստեղծական երկի գնահատութեան մէջ քանակութիւնը հչ մի արժէք չունի. շատ անգամ մի հատիկ գեղեցիկ դրժը բաւական է մի լաւ անուն ստեղծելու համար։ Եւ այդպիսի գործ մենք համարում ենք պ. Թումանեանի պոէմաներից «Անուշը» և «Մասունցի Դաւիթը», որոնց վրայ մի փոքր երկար կանգ առնելը անօգուտ չի լինի։

\* \*

«Անուշը» մեր քնարերգական բանաստեղծութեան մէջ մի առանձին և ինքնուրոյն տեղ է գրաւում։ Երկար տարիների ընթացքում գլխաւորապէս ոռուսական և եւրոպական բանաստեղծների հետևողութեամբ մեզանում գրւում էին ոտանաւորներ աւելի կամ պակաս յաջող, բայց և ոչ մէկը, համարեառ մէկը չփորձեց կամ չնամարձակուեց այն մութ աշխարհից խօսել, որի անունն է հայ դիւդ, այն լեռների թիկունքից, ուր դարաւոր կեանըը ստեղծել է տիպեր, հարուստ, բազմաբովանդակ ու հետաքրքիր։ Մեր հայրենի դիւթիչ բնութիւնը իր զարմանալի խենթութիւններով, իր գեղեցկութիւններով, իր ծոցում ջերմացրած առասպեկներով հատուկտոր նկարագրութիւնների, պատմուածքների մէջ հանդէս եկաւ, բայց երբէք նա չը ձուլուեց հայի բնոյթի, նրա հոգեկան առանձնայատկութիւնների, նրա էութեան հետ։ Մեր հայրենի ծաղկագարդ ձորերից մի համով-հոտովք բան չբերուեց, մի բուրալից փունջ չկազմուեց։ Պ. Թումանեանին էր վիճակուած այդ պակասը լրացնելու երջանիկ յաջողութիւնը։ Նա գիւղից, լեռներից, ձորերից, անտառներից եկաւ և իր հետ բերեց «Անուշը»։ Մի ամբողջ աշխարհ է այդ պոէման, գեղեցիկ, հմայիչ աշխարհ, ուր մարդ լսում է հովերի շշոնջը, ծառերի շառաջը, ջրերի կարկաչը, զգում է ծաղիկների բոյրը, գիւղի հոտը։ Դա մի հրաշագեղ պատկեր է, կենդանի, շարժուն, որի վրայից անցնում են իրար յետևից շարան-շարան՝ հովին իր ոչխարներով, եայլաղ գնացող խմբերն իրանց վրաններով, գիւղական հարսանիքներն իրանց մրցութիւններով, շատ անգամ արիւնու վախճանով, գեղջուկ սէրն ու ատելութիւնը հաւասարապէս անզուսպ ու վայրենի, և գիւղական ցնծութիւնը, խինդն ու ծիծաղը, և գիւղական հսկայ սուլքը։ Եւ այս բոլորի մէջ զգում ես վայրենի բնութեան տարերային շունչը, զգում ես, որ մարդը իսուսում է, լալիս, ծիծաղում միշտ ծառի, ծաղկի, խոտի, ժայռի, սարի, ձորի լեզուով,

զդում ես, որ մարդ ու բնութիւն այստեղ մի են, մի հոգի ունին, մի հեք, մի քրքիջ, մի սէր, մի ատելութիւն։ Պոէմայի նիւթը պարզ է, ինչպէս գիւղն ու իր բնութիւնը։ — Անուշն ու հովիւ Սարօն սիրու են իրար փոխադարձաբար, բայց Անուշի եղբայրը վրէժ ունի իր քրոջ սիրածից և սպանում է Սարօն։ Գիւղը հեշտ է սպանում, ձեռքն այստեղ գլխից աւելի սրտին է հնագանդ։ բայց պ. Թումանեան կարողացել է այդ բոլոր սովորական սպանութիւններից ընտրել ամենատրագիկականը, քրոջ սիրածն սպանուած եղբօր ձեռքով։ Եւ այս կմախքի վրայ նա կազմել է կենդանի գիւղը, խաւար ու գեղեցիկ, ինչպէս աստղագարդ գիշերը։ Նայեցէք, թէ Համբարձման գիշերը փէրիններն ինչպէս են երգում Անուշի դժբախտ սէրը։

«Օխտն աղթիւրից ջուր է առել  
Կոյս սափորով, լուռ ու մունջ,  
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,  
Կապել սիրոյ ծաղկեփունջ。  
Զուրն ու ծաղիկ աստղունք դրել,  
Խնդիրք արել աստղերին,  
Փափագ սրտով խնդիրք արել՝  
Բարի ժայռուն իր սէրին...  
Ափսո՞ս Անուշ, սարի ծաղիկ,  
Ափսո՞ս իգիթ քու եարին,  
Ափսո՞ս բօյիդ թելիկ-մնիկ  
Ափսո՞ս էդ ծով աշերին...»

Երկար չէ այս, ընդամենը երեք տուն և որքան հարուստ պատկերներով. ահա փէրինները, որոնք բազմած են լուսնի գունոտ շողերի վրայ, նրանց մըսունջը, որ լսւում է ծառերի միջից, և «օխտն աղբիւրը», որոնցից հայ կոյաը իր սիրոյ երջանկութեան համար ստիպուած է ջուր գողանալ գիշերով, և աստղերը, որոնք վերևից հսկում են նուիրական գործի վրայ, այս բոլորը, բոլոր հայ գիւղի հմայքն են կազմում, այս բոլորը, բոլորը պ. Թումանեանի գրչի տակ լեզու են առնում ու խօսում դիւթական լեզուով։ Հայրենի բնութիւնը քաշում է նրան, և բանաստեղծի երեսակայութիւնը թռչում է

«Դէպ այն սարերը, որ վէս, վիթխարի,  
Հարբած շարքերով բռնած շուրջպարի,  
Հսկայ շուրջպարի բռնած երկնքում,  
Հրճուում են ասես այն մեծ հարսանքում  
Պերճ Արագածի նազելի զստեր,  
Որ Դեւ-Ալ, Դեւ-Բէթ եւ այլ հսկաներ,

Խոլ-խոլ հականեր հընոց աշխարհի,  
Փախցրին քերին անառիկ Լոռի:

Հեռների տեսքը նրա հոգում յարուցանում է հին օրերի  
վերյուշեր, մանկութիւնից մնացած գողարիկ երազներ.

«Եւ մուն այրիրից մամուռ ժայռերի,

Թաւուտ ծրմակի լրին խորքերից

Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի

Արձագանքն անա լսում եմ նորից»:

Երջանիկ բառն արտասանուեց՝ արձագանգ... մանուկ օ-  
րերի արձագանգներ, որոնց այնպէս խստակ, այնպէս հնչուն են  
լեռներում ու ձորերում, որոնք խլում է բանաստեղծը՝ մեր ա-  
կանջներում հնչեցնելու համար։ Ահա դարձեալ մի քանի հըն-  
չիւններ այդ արձագանգներից, որոնք պատկերացնում են հայի-  
լեռնային կեանքը։

«Թնդում է զրւարթ աղմուկը բինի,

Բարձրանում է ծուխն իմ ծանօթ ուրեմից,

Ու բոլորն անա նորից կենանի

Ելնում են աշխոյժ վաղորդեան մութից,

Ու թարմ, ցոյապատ լեռների լանջում...

Սուև... ականջ արա, — հովիւն է կանչումք...

Եւ այդ հովիւը սիրահար երիտասարդն է, նա սրինգ-  
ունի և երգում է սիրակէզ սրտի զեղմունքը, որ քաղցրիկ ար-  
ձագանգներով բուրաշատ ձորի վրայով անցնում է հակառակ  
կողմը և մրմնջում է այն վրանի տակ, ուր զեղեցկուհի Անուշն-  
է։ Աղջիկը հասկանում է այդ ձայնը, նա սրտի թրթիռով դուրս  
է գալիս վրանի առաջ, բայց մայրը կայ, ամօթի, համեստու-  
թեան, օջաղի պատւի վրայ հսկող մայրը։

«—Հերիք է, Անհազ, ներս արի դագէն,

Քանի դուրս թոշն նայն դէս ու դէն։

Մէրը խորամանկ է, նա հազար հնար ունի, հազար աչք-  
նային, հազարն էլ կը խարի։

«—Մտիկ տուր, նանի, էն սարի լանջին,

Խոքա՞ն աւլուկ է տախս կանանցին։

Նանի, թող զնամ, քաղեմ ու հիւսեմ,

Էն սարի լանջին «զան, զիւլիւմ» ասեմ։

Մայրը համաձայն չէ, այնտեղ ջահիլ հովիւներ կան-  
պարկեշտ աղջիկը վրանում պիստի մնայ։

«Ա՛խ, սիրտս, նանի, յըգիտեմ ընչի

Մին լաց է լինում սեւազնած, տխուր,

Մին թե է առնում, ուզում է թոշի,

Զըգիտեմ թէ ուր, յըգիտեմ թէ ուր...

Նանի ջան, նանի, ես բնչպէս անեմ,  
Ի՞նչ անի անքուն, անհանգիստ բալէղ...  
Նանի ջան, նանի, կուժը թող առնեմ,  
Աղքիւրը զնամ աղջիկների հետ...»

Կուժ ու աղքբէւր... որքան դժբախտ կը լինէին գիւղացի  
աղջիկները, եթէ կուժ ու աղքբէւր գոյութիւն չունենային աշ-  
խարհում: Աչք ու յոնք կայ աղքբէւր ափին սիրած երիտասարդի  
հետ խօսելու համար, և յետոյ՝ ջուրը, կարկաչիւն ջուրը խօսուն  
է: լաւ է նրան յանձնել իր երազները, վիշտը, նրա հետ բա-  
ժանել իր ցանք ու խնդութիւնը: Ահա թէ ինչու կուժն առած  
ջրի գնալ գիւղացի աղջկայ համար միշտ մի քաղցր, մի հաճե-  
լի զրոսանք է: Եւ այդ գրաւիչ զրոսանքը, նրա հետ կապուած  
սիրային խորհուրդը բանաստեղծը ըմբռնել է խորապէս և ար-  
տայայտել է գողարիկ տողերում.

«Կըժերն առած՝ թըռւըռալով՝  
Զուրն են իշնում աղջիկներ,  
Խընդում՝ իրար ուսի տալով,  
Սրգը զլնգում սարն ի վեր:  
—Ամպի տակից ջուր է զալի,  
Դոշ է տալի, փրփրում,  
Էն ում եարն է նատած լալի  
Հօնգուր-հօնգուր էն սարում:  
Ա՛յ պաղ ջրեր, զումալ ջրեր,  
Որ զալիս էք սարերից,  
Գալիս՝ անցնում հանդ ու չօլեր,  
Նարս էլ խմնց էդ ջրից»:

Աղքիւրը հեռու չէ, մօտիկ ձորումն է, բայց ուշանալու  
հազար պատճառ կայ: Անուշը ուշանում է, նա ձորի խորքում,  
ծառերի հովանու տակ համբուրումն է իր Սարօի հետ այն ժա-  
մանակ, երբ արդէն՝

«Ամպերն են եկել, սարերը պատել,  
Զորերը լցւել, իրար փաթաթել:

Աղջիկն անհանգիստ է, մօր ձայնը հասնում է նրա ական-  
ջին, նա աղաչում է Սարօին, որ թողնի իրան տուն դառնալ  
շուտով, զանգատուում է, որ նա շուտով չեկաւ, իրան սպասել  
տուեց, որ այնպէս չի սիրում, ինչպէս ինքը: Բանաստեղծը  
սիրատանջ աղջկայ այդ տրտունջները պատկերացրել է մի  
գողարիկ լեգենդայի մէջ, որ օրքան պարզ է, նոյնքան խոր-  
հըրդաւոր.

«Ասում են՝ ուռին

Աղջիկ էք ինձ պէս,

Մընում էր եարին,  
Ու չեկաւ նա տես.  
Խեղճը դողալով՝  
Անյոյս կռացաւ,  
Դարդից չորացաւ,  
Ուռենի դարձաւ.  
Ճրերի վրայ,  
Դուռկար կախած  
Դեռ դողում է նա  
Ու լալիս կամաց  
Ու ամբողջ տարին  
Մի միտք է անում,  
Թէ եարը եարին  
Ո՞նց է մոռանում:

**Սիրահար երիտասարդի պատախանը իբրև բնութեան մարդու հոգու պատկերը, իբրև հովկի սիրոյ զեղմունք՝ հիանալի է. այդ կտորը յիշեցնում է «Վէրք Հայաստանի»-ից Աղասիի երգերը.**

—Ախ Անո՛ւշ, Անո՛ւշ, Էդ ինչ ես ասում.

Բաս դու չես լսում.

Էն՝ որ լանջերին խաղեր եմ ասում,  
Ո՞ւմ հետ եմ խօսում.

Էն որ գիշերով շընու եմ փչում,  
Էն ում կանչում.

Էն, որ մոլորած նստած եմ մնում,  
Ո՞ւմ հետ եմ լինում.

Էն որ հառաջում ու ախ եմ քաշում,  
Էն ում եմ յիշում...»

Հովկի սէրը... բանաստեղծը կարող էր նրա շրթումքներում դնել այլ բառեր, որոնք խօսէին սրտից, անքուն գիշերներից, լուռ տանջանքներից, մինչև անգամ արցունքից, բայց այս բոլորի փոխարէն խաղ, շնոր, մոլորուած վիճակ, և բոլորը լեռնալանջերին, գիշերով, երբ համատարած լուռթեան մէջ հոգին կարողանում է փարել միայն մի հատիկ էակի, մի հատիկ պատկերի: Եւ այդ պատկերը մի գեղեցիկ աղջիկ է, նրա սիրահարը մի հովկւ, որ սարից սար, ձորից ձոր, աղբրից աղբիւր է թափառում ու ամեն տեղ իր շնուն հնօնգոււր-հօնգոււր լալիս է ծաղիկներին, խոտերին, ժայռերին, պատմում իր ցաւը, իր մենակութիւնը, իր այրող կարօտը: Աղջիկը ձորի մի կողմումն է, հովիւր հակառակ, պտոյտ-պտոյտ են անում սիրահար այծեամեների պէս և տրորուած ծաղիկների հետքով իրար փնտրում:

Խնչքան լաւ է այդ բոլորը, ի՞նչպէս բնական Բանաստեղծի տողերում այդ բոլորը պատկերներով գալիս են անցնում, և ընթերցանութիւնից յետոյ գիւղից ու բնութիւնից մի բան է մնում, մի կենդանի առողջ շունչ, որ փշում է մարդու վրայ որպէս զովացուցիչ զեփիւռ: «Անուշի» մնացած երգերը գրուած են նոյն բանաստեղծական աւինով, բնութեան և մարդու, նրա բարոյական աշխարհի, նրա հոգեկան առանձնայատկութիւնների խելացի ըմբռնումով: Ահա գիւղական հարսանիքը, ուր այնքան ջահիլների բախտեր են որոշում, ուր կինը գեղեցիկ, և տղամարդը հուժկու, կտրիճ պիտի հանդիսանայ: Պարերի հետ միաժամանակ մրցութիւններ են կատարում: Մրցողներն են Անուշի եղայրը Մօսին և սիրահարը Սարօն: Լեռներից իջած երկու հովիւներ, անհեթեթ ու հուժկու, երկումն էլ «փգիթ». մեղք է, որ նրանցից մէկնումէկի մէջքը գետնովը դիպչի:

«Աղաթ կայ սակայն էն մութ ձորերում,

Ու միշտ հնազանդ հընոց աղաթին՝

Ամբոխի առջեւ իվիթն իր օրում

Գնատին յի զարկիլ ընկեր իվիթին»:

Բայց Սարօի աշքը դիպաւ Անուշին, իրան կորցրեց և իր հակառակորդին գետնովը տոռեց: Ողջ գիւղը թնդաց, Մօսին յաղթուած է, և նամարդ ձևով: Ահա արեան թշնամութեան աղբիւրը: Մօսին վրէժ ունի Սարօից: Նա քրոջը հազար կտոր կ'անի, բայց Սարօին չի տալ. և այդ դեռ քիչ է, նա արին է ուղում: Բայց Սարօն էլ տղամարդ է, սարերի տղամարդ. նա փախցնում է Անուշին:

«Ամպերը զանդաղ ուղտերի նման՝

Նոր են ջուր խմած՝ ձորից բարձրանում,

Քարոտ թիկոնքից Զաթին զաղ լերան

Նոր է արեւը պոռևնկը հանում.

Գիւղում աղմուկով իրար են անցնում

Կըտեր ծայրերին կանայք հաւաքւած,

Տըղերքը դէպի քարափն են վազում,

Հրացանների կէսերից բռնած:

Այս տողերի մէջ բանաստեղծը ձեռքի մի երկու լայն շարժումով գրել է մի հարուստ պատկեր. գիւղի հաւաքն է այս. թէ ջարդ է զարկում, նախիրը քշում, թէ իր հարամին ճանապարհներն է բռնում, թէ մի յանդուզն՝ աղջիկ է փախցնում, գիւղը ողջ ոտքի վրայ է, նա մի տուն է, բոլորը եղայրներ են, վասնգը բոլորին է, և միշտ

Ճկտեր ծայրերին կանայք հաւաքւած,

Տըղերքը դէպի քարափն են վազում»

Անուշը յետ է բերում, և Մօսին սարերում սպանում է  
Սարօխն: Ո՞վ է տեսել գիւղերում սուզը. ով չի տեսել, նա  
թնդ կարդայ հետևեալը.

«Ողբացին անշունչ դիակի վրայ  
Անտէր մնացած ոչխարի մասին,  
Անսիրտ անէծքով յիշեցին նրա  
Անճար մնացած խեղճ եարի մասին.  
Եւ նրա մասին, որ ընկերները  
Հանդեր զնալիս «Սարօ» կը կանչեն,  
Որ սարից փախած սոված շները  
Կըտերը պիտի ոռնան, կլանչեն:  
Որ հով սարերի սովորած նանը  
Ել սար չի զնալ առանց Սարօի»...

Եւ այս ողբի ամեն մի տողը մի ամբողջ պատկեր է  
գիւղական կեանքի. ոչխարներ, անտէր շներ, սգաւոր մայրեր,  
ընկերներ, բոլորը, բոլորը միասին են սգում, հսկայ սուզը մութ  
ձորերի, ուր ընկած է իգիթի դիակը: Զահիլ տղամարդի մահը  
գիւղերում մի սովորական մահ չէ, դա մի ամբողջ աշխարհ է,  
որ յանկարծ փուլ է գալիս, և նրան լալու համար սգաւորները  
իրանց հետ ձայնի են զցում ձոր ու դաշտ, քար ու սար: Մի  
ջիւանի մահ ողբալու համար կարծես գիւղը երբէք բաւակա-  
նաչափ արցունք չունի: Իր շուրջն ամեն ինչ, չնչաւոր թէ  
անշունչ, աշխատում է լացացնել իր սրտառուչ ողբերով:

Աննման է մանաւանդ վշտից ու սիրուց կիսախելագար Ա-  
նուշի սուզը.

«Ա՛խ, էն կանաչ սարի լանջին  
Ո՞վ է բնած էն տղէն,  
Վըրէն քաշած սեւ եափընջին,  
Կուռը հանած էն տղէն...  
Զա՞ն, իմ եարն է, ջանին մնոնիմ,  
Մաղիի հոտով նա հարքել,  
Սարի լանջին, հովի միջին  
Մուշ-մո՛ւշ, անուշ մրափու»:

Ինչպէս մեր իսկական ժողովրդական երգերը, Անուշի այս  
սուզը, որի միայն մի կտորն ենք զնում այստեղ, աչքի է ընկ-  
նում իր ներդաշնակութեամբ, բառերի այսպիսի յաջող դասա-  
ւորութեամբ, որ ընթերցումն անդամ երգի տպաւորութիւն է  
թողնում.

«Սարի լանջին, հովի միջին,  
Մուշ-մո՛ւշ, անուշ մրափել»:

Եւ այս երաժշտականութիւնը միայն մի տեղում չէ, այս պոէման ծայրէիծայր լի է այսպիսի կտորներով:

Մենք միքանի կտորներ մէջ բերինք այդ սիրուն պոէմայից՝ ընթերցողին մի հեռաւոր գաղափար տալու համար այս հետաքրքիր գործի մասին։ Բայց պէտք է կարդալ ամբողջը, ճաշակել լեռնային կեանքի քաղցրութիւնը, զգալ զեփիւոփ շունչը, ծաղիկների բուրմունքը, լսել մելամաղձոտ շնուն, տեսնել ամբողջ հայ լեռնային գիւղը իր ուրախութիւններով ու վշտով, իր արցունքով ու ծիծաղով համոզուելու համար, թէ Անուշը մի գոհար է մեր գեղարուեստական գրականութեան մէջ։ Նրա հերոսուհին՝ Անուշը և նրա սիրահար Սարօն իրանց սիրով ու գժբախտութեամբ կը մնան ինչպէս գիւղացի հայ աղջկայ և հայ երիտասարդի լաւ ըմբռնուած և գծագրուած տիպեր, որոնք դեռ երկար, երկար կ'ապրեն ու կ'երգուեն մեր լեռներում ու գիւղերում։

\* \* \*

«Սասունցի Դաւիթ»-ով բանաստեղծը մեզ տանում է ազգային դիւցազնական աշխարհը, ուր ամեն ինչ տարերային է ու հսկայ, ուր գործերն ու մարդիկ խօսական են և սովորական հասկացողութեան անըմբռնելի։ Եւ այդ աշխարհը որքան հեռու է մեզանից և անօրինակ, նոյնքան գրաւիչ է և աղբիւր անսպառ ներջնչումների։ Ժողովուրդների հոգին մի շտեմարան է, ուր թագնուած են անթիւ գանձեր։ Ահա նրանցից մէկը։

Դրական բարբառը, որքան և նա աղքատ լինի ու չզարգացած, մի անսպայման առաւելութիւն ունի. այդ այն է, որ նա աւելի կամ պակաս հասկանալի է լինում միշտ ժողովրդի բոլոր խաւերին։ Եւ այնքան ժամանակ, մինչև որ այս կամ այն գաւառաբարբառի պարունակած անգիր գրականութեան գանձերը չեն վերածուի գրական լեզուի, նրանք ընդհանրութեան սեփականութիւն դառնալ չեն կարող։ Մինոյն է, թէ նրանք գրուած լինէին մի մեռած լեզուով, մեզ համար՝ օրինակ՝ գրաբարով։ Պ. Թումանեան «Սասունցի Դաւիթը» գրական լեզուի վերածելով՝ մեր ժողովրդական ընթերցանութեան գործին ահազին ծառայութիւն է մատուցել։ Շնորհիւ նրա՝ այժմ մեր միակ դիւցազներգութիւնը կարող է հաճոյքով կարդալ ու հասկանալ իւրաքանչյուր հայ մարդ։

«Սասունցի Դաւիթը» մեր ամբողջ պատմութիւնն է, աղէտալի ու փառաւոր, որ ժողովուրդը հիւաել է՝ իր քմահաճ, միամիտ երևակայութեամբ իրար խառնելով անուները, դէպ-

քերը և տեղերը: Պատմութեան յաջորդական զարգացումը խախտուել է, թեւերը կարատուել, բայց էլի այդ գեղեցիկ ժխորի մէջ պահուել են ընդհանուր սկզբունքներ, անաղարոտ է մնացել մանաւանդ մեր ազգային բնաւորութիւնը իր թոյլ և զօրեղ գծերով: Ասիան իր մոռայլ ծոցից վիժել է և մեր գլխին թափել անթիւ բարբարոսների գնդեր, և յայտնի աշխարհագրական պայմանների շնորհիւ հայը միշտ դրուել է պաշտպանողական վիճակի մէջ: Հասարակական, կոլլեկտիւ գործունէութեան բնագդի փոխարէն նոյն պայմանների շնորհիւ զարգացել է մինչև ծայրագոյն աստիճանի անհատական էներգիան, և մեր ամբողջ պատմութիւնը դարձել է զօրեղ, կորովի, աննկուն անհատների գործունէութեան մի հանդէս: Միշտ երկերը հեղեղուած թշնամիներով, և միշտ մեր մէկը հաղարների դէմ: Ահա Մըսրամելիքի զօրքերը.

Էսպէս անհամար զօրքեր հաւաքեց,  
Նկաւ Սասմայ դաշտ՝ բանակը զարկեց  
Ու ծանըր նստեց Մըսրայ թագաւոր:  
Էնքան ահագին բազմութիւնն էն օր  
Բաթմանայ ջրին եկաւ ու չորեց.  
Որ եկաւ, խմեց—գետը ջամաքեց,  
Սասմայ քաղաքում մնացին ծարաւ:

Այսպէս են եկել բոլորը—պարսիկն ու մոնղոլը, արաբն ու թաթարը: Եւ այս բոլորի գէմ միշտ անհատներ, հուժկու, անհեթեթ հսկաներ, որոնց աւերակ երկերը իրար յետևից դուրս է թափել իր ծոցից և պատմութիւնը դարձնել նրանց ձեռքով: Գուցէ աշխարհի ոչ մի երկրում անհատի դերն այն աստիճան մեծ, բեղմնաւոր, վճռական չի եղել պատմութեան մէջ, որքան մեր հայրենիքուամ: Իբրև ապացոյց բաւական է յիշել Մամիկոնեան հերոսների ամբողջ չքնաղ, շարքը և իրար յետևից կամ իրար կողքի բարձրացող և ընկնող մանր ու մեծ թագաւորութիւնները: Եւ այդ զարմանալի պատմութիւնից ժողովուրդը պահել է միայն «Սասունցի Դաւիթը»: Մեծահոգի, բարեսիրտ, գթուած մի հսկայի պատմութիւնն է այս, որի մէջ ժողովուրդը մարմնացրել է իր իդէալը, իր բոլոր սիրած, պաշտած քաջերին: Աւելի ճիշտ կը լինէր ասել՝ հայ ժողովուրդն ինքն իրան է մարմնացրել իր Դաւթի մէջ, եւ այդ հսկան լաւ է, չափազանց գրաւիչ. իր ահագին ոյժին նա միացրել է մի մանկական սիրու: Բոլոր հսկաները միշտ այդպէս չեն լինուած: Աքիւէսը զարհուրելի եղաւ Ծրովադայի պատերազմում պարտուած թշնամիների հետ: Եթէ ճշմարիտ՝ հայը Դաւթի մէջ դրել է իր բնաւորութիւնը, իր լաւ և վատ կողմերը, ապա

ցաւալի է մտածել, թէ ստրկութիւնը ի՞նչ աւերած է գործել մեր բարոյական նկարագրի մէջ:

Սակայն այս պոէմայի նիւթը չափազանց յայտնի է, որպէսզի հարկ լինի նրա վրայ ծանրանալ: Հետաքրքիրն այստեղ այն մշակութիւնն է և այն ձևը, որ բանաստեղծը տուել է նիւթին: Հստ երևոյթին այդ աշխատանքը թում է ոչ գըժուարներից: հարուստ, բազմաբովանդակ նիւթից մի բան միշտ կարելի է շինել: Սակայն այդ միայն ըստ երևոյթին: «Սասունցի Դաւթի» նիւթը բանաստեղծական նոր ձևերի, նոր պատկերների մէջ պարփակելու կամ փոխելու համար բազմաթիւ այնպիսի դժուարութիւններ կան, որոնց հարթելու համար պէտք է անպատճառ բանաստեղծ և այն էլ գիւցազներգու բանաստեղծ ծնուած լինել: Զափազանցութիւն չի լինի ասել նոյնիսկ, որ իր «Անուշը» ստեղծագործելու համար բանաստեղծը աւելի դիւրութիւններ ունի, քան «Սասունցի Դաւթը»: Եւ դա հասկանալի է, եթէ ինկատի առնենք, որ առաջն դէպքում նա միանդամայն ազատ է զգում արդէն որոշ սահմաններում դրուած և որոշ գոյն ունեցող նիւթի կապանքներից, որ նա կարող է ընթացք տալ իր երևակայութեան թոփչքին, դէմքեր և պատկերներ աւելացնել կամ նուազեցնել, ստեղծել տիպեր, ինչպէս ինքն է ցանկանում: մինչդեռ երկրորդ դէպքում նա ստիպուած է հաշվի առնել ժողովրդական ստեղծագործութեան բոլոր մանրամասնութիւնները, սրբութեամբ պահպանել արդէն կենդանի տիպերի բնաւորութիւնը, նրանց չափած-ձևած գործունէութեան յաջորդական զարդացումը և գեղեցիկ խոտորումների, բանաստեղծական յաւելաւմների մէջ պահպանել ժողովրդի տրամաբանութիւնը, նրա ողին: Ահա այս վերջին տեսակէտից պ. Թումաննեանի գործը կարելի է յաջողուած համարել: «Սասունցի Դաւթը» նրա գրչի տակից դուրս է եկել որպէս ժողովրդական ընթերցանութեան աչքի ընկնող գործ: Բանաստեղծը կարողացել է հաւատարիմ մնալով նիւթին՝ այդ պոէման զարդարել նորանոր պատկերներով, համեմատութիւններով, ժողովրդական ասացուածներով և այն աստիճան վարպետօրէն, որ դժուար է հինը և նորը զատել իրարից, կարծեն նա այդպէս էլ եղել է միշտ:

Աներկբայ է, որ պ. Թումաննեան այս պոէման գրելիս աչքի առաջ է ունեցել երկու տեսակ նիւթ, մէկ՝ «Սասունցի Դաւթի» մի քանի վարիանտները, մէկ էլ իր ծննդավայրում պատմուող ժողովրդական աւանդութիւնները: Վերջիններով նա լըրացրել և ճոխացրել է առաջինը: Ահա թէ ինչու նրա պատմելու եղանակը, ոճերը, դարձուածները այնքան հասկանալի,

այնպէս ժոքովրդական ոգուն պատշաճ են։ Հէսց սկիզբը յիշեցնում է մեր հէքիաթների սկսուածքը։

«Առիւծ-Մըները, զարմով դիցազուն,

Քառասուն տարի իշխում էր Սասուն.

Իշխում էր անեղոյ, ու նրա օրով

Հաւքն էլ չէր անցնում Սասմայ սարերով։

Սասմայ սարերից շատ ու շատ հնուու

Թընդում էր նրա հոչակն ահարկու,

Խոււում էր իր փառքն, արարքն անվեներ։

Հազար բերան էր—մի Առիւծ-Մըներ»։

Եւ որպէս օրինակ, թէ պ. Թումանեան որքան հաատարիմ է մնում նիւթին և ինչպիսի վարպետութեամբ, ժողովրդական ոգով է ճոխացնում նիւթը, այստեղ մէջ կը բերենք բնագրից մի քանի կտոր։ Օգտում ենք պ. Մ. Աբեղեանի գրի առած վարիանտից։

«Լիսուն բաղրցիք գացին մօտ Զէնով-Յովան,

Ասացին.—Զէնով-Յովան։

Քեռ տղէն մեր քաղաք աւրեց,

Մենք կը վախնանք էսա գէլերաց,

Արշերաց, լաստրակներաց»։

Պ. Թումանեանի պոէմայում յիշեալ տողերը ընդունել են հետևեալ կերպարանքը։

«Լուսին իշխաններ ելան, միասին

Գնացին, Զէնով-Օհանին ասին.

—Աման, քեզ մատաղ, այ Օհան ախպէր,

Մեր գառն ու մեր ուզ թնդ մնան անտէր,

Միան սրանից ազնատ արա մեղ.

Ո՛չ գառն է ջոկում; ոչ գայլն ու աղւէս.

Էս քաղքի զիսին փորձանք կըբերի

Գայլերոց կ'անի, կըտայ, կ'աւերի»։

Մի փոքրիկ համեմատութիւն այս երկու նմուշների բաւական է ապացուցանելու համար, որ բանաստեղծը խորապէս ըմբռնել է բնագրի ոգին և լաւ ծանօթ է ժողովրդական հոգեբանութեան։ Ահա մի ուրիշ օրինակ։

«Դաւիթ, տիւ ընչնւ էսա մարդեր կը սպանես,

Ամեն մօր մէկ են։

Մսրա մէլիք զօրով ի բերի։

Որ տիւ կտրիմ ես՝

Գնա խետ Մսրա մէլիքին կոլու արա»։

Պ. Թումանեան ահա թէ ինչ է ստեղծել այս հինգ հակիրճ տողերից։

«Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,  
Հեր ես սրանց դու կոտորում:  
Ամեն մինը մի մօր որդի.  
Ամեն մինը մի տան ծրագ.  
Որը կրնն է թողիլ էնտեղ  
Աչքը ճամբին խեղն ու կրակ,  
Որը մի տուն լիք մանուկներ,  
Որը ծնող աղքատ ու ծեր,  
Որը լացով՝ քողն երեսին  
Նորապսակ ջահիլ հարսին...  
Թափառոր զօրով-թըրով  
Հաւաքել է՝ էստեղ թերել,  
Խեղճ մարդիկ ենք պակաս օրով,  
Մենք քեզ վնաս ինչ ենք արել:  
Թափառորն է քու թշնամին,  
Կըուի ունիս—իր նետ արա,  
Հեր ես քաշում թուր-կայծակին  
Էս անճարակ խալիսի վրայ»:

Այսքանի մէջ ոչինչ չկայ, որ հակասէր բնագրին, նրա-  
պարզ, ժողովրդական ոգուն: Միենայն ժամանակ հիմնական-  
գաղափարը՝ մի բռնակալի յետկից քայլող սարուվշների բազ-  
մութեան լացն ու աղերսը նորանոր պատկերներով ՚ուխացել է  
և ժողովրդի ընթերցանութեան համար հեշտացել: Զենք բազ-  
մացնի այսպիսի օրինակների թիւը: «Սասունցիկաւիթը» ծայ-  
րէիծայր գրուած է շնորհալի կերպով և մեր ժողովրդական ու  
աշակերտական գրադարանների համար մի գանձ է:

\* \* \*

Պ. Թումանեանի «Դէպի անհունը» մի գեղեցիկ և նոյնիսկ  
խիզախ փորձ է, և միայն այդքան: Նիւթը նոր չէ և ոչ էլ օրի-  
գինալ: Մահի զօրութեան և մեր կեանքի վերջնական ունայնու-  
թեան գաղափարը բոլոր մետափիզիկ փիլիսոփաների քննու-  
թիւններից դուրս՝ նաև բանաստեղծ-փիլիսոփաների լացի և  
անէծքի նիւթ է եղել: Ոչ խոշոր տաղանդը և այն էլ առանց-  
փիլիսոփայական լայն զարգացման, անկարող կը լինի այդ  
միշտ հին և միշտ նոր նիւթի մասին օրիգինալ բան ասել:  
Անհունը մի Միւլի-Պրուդոմի բանաստեղծական խոհերով զար-  
դարուած շատ գրաւիչ է, կարդացւում է գեղարուեստական-  
բարձր հաճոյքով, բայց պ. Թումանեան մի շարք պայմաննե-  
րի բացակայութեան պատճառով դէպի անեղը սաւառնող հո-

գիների յետեկց հասնել չի կարող: Նրա «Դէպի անհունը» պարունակում է շատ սիրուն, շատ բանաստեղծական կտորներ, որոնք կարդացուում են հաճոյքով և կը կարդացուէին նոյնիսկ՝ անկախ ընդհանուր իդէայից և ամբողջութիւնից, որոնք երկուսն էլ՝ ի դէպ է ասել՝ թոյլ են տարուած:

\* \*

Այս բոլորից յետոյ իբրև վերջնական եզրակացութիւն՝ կարծում ենք՝ կարելի է ասել, որ պ. Թումանեանին անպայման յաջողուում են պոէմաները և այն՝ ժողովրդական կեանքից, ներկայ, թէ անցեալ: Կարճ, կտրուկ ոտանաւորների մէջ նրա երևակայութիւնը սղմուել չի կարողանում: Նա բնութեան որդի է, լայնարձակ դաշտերի և լեռների, խոր-խոր ձորերի օդին է շնչել, հեքը լայն է և երկար. Նրան կարծես հարկաւոր է ազատ տեղ տարածուելու, բանաստեղծական քմահաճոյքով փոռուելու համար: Ինքը՝ պ. Թումանեան զիտակցում է այդ, թէ ոչ, այդ միմնոյն է, բայց նրա հոգում ապրում է հայ ժողովուրդը: Նա երգում է այդ ժողովուրդը, երգում հինգ նրա համար: Եւ լաւ է, շատ լաւ է, որ այդպէս է:

Ա.

---

Բակուրան՝ «Կիպրոս կղզին». աշխարհագրական-պատմական տեսութիւն և հայ գաղթականութիւն: Նիկոսիա, տպարան Աղդ. Կըթարան-Ռըբանցի, 1903, զինն է 1 շեմնդ կամ 1 ֆր. 25 սանտ.:

---

Գեղեցկութեան և սիրոյ դիցուհի Աֆրոդիտէի ծննդավայր այդ կղզին երկար դարերի ընթացքում բազմաթիւ ազգեր իրար ձեռքից են խլել—նախապատմական հետիւներից յետոյ փինիկէցիները, ասորիները, եգիպտացիները, պարսիկներ. Վ դարում Քրիստոնից առաջ նա դառաւ յունական և չնայած յետազայ դարերի նուաճողներին—արար, լատին, ջենովեան, վենետիկեան, հայկական—չնայած 1571 թւականից հաստատուած օսմանեան բնութեան և 1878 թւականից բրիտանական պրոտեկտորատին՝ Կիպրոսը շարունակում է մնալ յունական իր ազգաբնակութեան գերակշռող մասով: Զարմանալի չէ որ այժմ էլ նրա մէջնշմարտում է ձգուում—միանալ Յունաստանի քաղաքական մարմնին:

1901 թւականին կատարուած ժողովրդագրութեամբ այդ կղզու ամբողջ ազգաբնակութիւնը հաւասար էր 237,022 հոգու, որոնցից 182,732 յոյն, 51,309 մահմէղա-